ՀԱՎԵԼՎԱԾ B

# ՀԱՅՏ/ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ «ԴԱՍԵՐԻՑ ԱՌԱՋ ԵՎ ՀԵՏՈ» ԾՐԱԳՐԻ ՀԱՄԱՐ

«Beyond the Bell – Երեխաների համար ծառայություններ դասաերից հետո» ծրագիրը ներառում է խաղերի կազմակերպում, գիտելիքների զարգացում, սնունդ, մարմնամարզություն և տնային աշխատանք: Ծրագիրը նախատեսված է այն աշակերտների համար, որոնք կարող են ինքնուրույն գնալ դեպի խաղահրապարակ, մնալ այնտեղ և ետ գալ: «Beyond the Bell – Երեխաների համար ծառայություններ դասաերից հետո» ծրագիրը կապված չէ երեխայի խնամքի հետ: Դա կամավոր կերպով ընտրած ծրագիր է: Աշակերտները գրանցվում են ծրագրի համար և դուրս են գալիս ծրագրից իրենց կամքով: Երեխաները պետք է պահեն իրենց պատշաճ կերպով, և նրանք կարող են կորցնել ծրագրում մասնակցելու հնարավորությունը, եթե նրանց պահվածքը խանգարի մյուսներին: Տարրական դպրոցի ծրագիրը՝ տարրական դասարանների աշակերտների համար է (2-ից 5/6-րդ դասարան), միջին դպրոցի ծրագիրը՝ միջին դպրոցների դասարանների աշակերտների համար է (6-ից 8-րդ դասարան):

Ծնողներին և խնամակալներին հիշեցնում ենք, որ նրանք պետք է նախօրոք կազմակերպեն իրենց երեխայի վերցնելը ծառայությունը ավարտելուն պես: Այն երեխան, ում չեն վերցրել, կամ ով չի գնացել տուն ինքնուրույն (նախորոք ստանալով այդ թույլտվությունը) մինչև ծառայության ավարտը՝ կհամարվի «առանց հսկողության» երեխա: Այս դեպքում վերահսկող աշխատակիցները կսկսեն «մնացած երեխա» ընթացակարգը: Եթե երեխային լիազորված չափահաս անձին հանձնելու փորձերը չեն հաջողվի, ապա վերահսկող աշխատակիցները կկապվեն Տեղական իրավապահ գործակալության հետ՝ աջակցությունը և երեխայի խնամքը կազմակերպելու համար: Եթե դուք չկարողանաք կազմակերպել ձեր երեխայի մշտական համապատասխան վերահսկողությունը՝ ծառայության ավարտվելուց հետո, ապա նա կզրկվի ծրագրում մասնակցելու արտոնությունից: **Ծնողները/Խնամակալները պարտավոր են նշել բոլոր հեռախոսահամարները և կոնտակտային տվյալները՝ արտակարգ իրավիճակների համար, և տեղյակ պահել նրանց փոփոխվելու դեպքում:**

«Beyond the Bell – Երեխաների համար ծառայություններ դասաերից հետո» ծրագիրը ՉԻ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՒՄ ոչ աշխատանքային օրերին (հանգստյան օրեր, տոներ, աշակերտների ազատ օրեր և այլն): Խաղահրապարակի ծառայությունները հասանելի են միայն նշված ժամերին:

«Դասերից առաջ և հետո» ծրագրի մեջ մասնակցելու իրավունքը ստանալու համար պետք է լրացվի համապատասխան հայտ/համաձայնագիր:

«Beyond the Bell – Երեխաների համար ծառայություններ դասաերից հետո» ծրագրի ամենօրյա շահագործման համար պատասխանատու անձանց հետ կապ հաստատելու համար կարող եք զանգահարել.
*Երիտասարդության զարգացման ծրագիր* (YDP) *և Երեխաների համար ծառայություններ YDP-ի հաստատություններում - (818) 587-4300; Տարրական դպրոցներ – (310) 515-3010 (ոչ YDP-ի հաստատություններում);Միջին դպրոցներ – (213) 633-3500:*

**Հաստատում.**
Ես համաձայն եմ հետևյալ կանոնների և սկզբունքների հետ, որոնց հետևելը իմ երեխային իրավունք են տալիս մասնակցելու «Beyond the Bell – Երեխաների համար ծառայություններ դասաերից հետո» ծրագրում.

- Իմ երեխան ԼԱՄԴՇ-ի դպրոցի 2-8-րդ դասարանի աշակերտ է և ապրում է տվյալ բնակության տարածքում, կամ հաճախում է մեկ այլ ԼԱՄԴՇ-ի դպրոց, այսինքն խորացված ուսուցումով դպրոցի աշակերտ է և այլն: (Նշում. Անկախ (charter) և մասնավոր դպրոցների աշակերտները չեն կարող մասնակցել)
- Ես հրահանգել եմ իմ երեխային, որ դպրոցից արձակվելուց հետո նա անմիջապես իր դասարանից գնա նշանակված վերահսկվող տարածք՝ «Beyond the Bell – Երեխաների համար ծառայություններ դասաերից հետո» ծրագրում մասնակցելու համար, և գրանցվի նշանակված վայրում ժամանելու պես:
- Ես հրահանգել եմ իմ երեխային, որ նա պետք է մնա «Beyond the Bell – Երեխաների համար ծառայություններ դասաերից հետո» ծրագրի ղեկավարի («մարզիչի») կողմից վերահսկվող տարածքում:
- Ես ամեն օր զգուշացնելու եմ իմ երեխային, թե երբ նա պետք է դուրս գա «Beyond the Bell – Երեխաների համար ծառայություններ դասաերից հետո» ծրագրի իրականացման տեղից:
- Ես ամեն օր զգուշացնելու եմ իմ երեխային, թե որտեղ նա պետք է գնա անմիջապես «Beyond the Bell – Երեխաների համար ծառայություններ դասաերից հետո» ծրագրի իրականացման տեղից դուրս գալուց հետո (այսինքն, տուն, նշանակված վայր, և այլն):
- Ես տեղեկացրել եմ իմ երեխային, որ «Beyond the Bell – Երեխաների համար ծառայություններ դասաերից հետո» ծրագրի իրականացման տեղից դուրս գալուց հետո նա այլևս չի կարող վերադառնալ այնտեղ օրվա մնացած ժամերի համար:
- Ես հասկանում եմ, որ եթե իմ երեխային չի վերցրել որևէ լիազորված չափահաս անձ, կամ նա չի գնացել տուն ինքնուրույն մինչև ժամը 18.00 (ծառայության ավարտը), աշխատակազմը կսկսի «մնացած երեխա» ընթացակարգը. եթե մեկ ժամվա ընթացքում չհաջողվի կապվել ծնողի կամ լիազորված անձի հետ և հանձնել երեխային իրենց, երեխայի մասին հաղորդվելու է համապատասխան իրավապահ գործակալություն, որը իր վրա պատասխանատվություն կվերցնի երեխայի վերահսկողությունը և անվտանգությունը ապահովելու համար:
- Ես հասկանում եմ, որ «Beyond the Bell – Երեխաների համար ծառայություններ դասաերից հետո» ծրագրում մասնակցությունը հանդիսանում է արտոնություն, և եթե իմ որդին/դուստրը չհետևի բոլոր կանոններին, նա կարող է զրկվել այդ արտոնությունից:
- Ես տրամադրել եմ մեկից ավելի կոնտակտային համար և չափահաս անձանց լրացուցիչ անուններ, որոնք իրավասու են վերցնել իմ երեխային արտակարգ իրավիճակի դեպքում, կամ եթե իմ երեխան կհամարվի «առանց հսկողության» երեխա և սկիզբ կառնի «մնացած երեխա» ընթացակարգը: Լիազորված չափահաս անձը պետք է ներկայացնի լուսանկարով անձը հաստատող փաստաթուղթ նախքան աշակերտին վերցնելը:

*Լոս Անջելեսի Միացյալ Դպրոցական Շրջանը*

BEYOND THE BELL ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

# ՀԱՅՏ/ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ «ԴԱՍԵՐԻՑ ԱՌԱՋ ԵՎ ՀԵՏՈ» ԾՐԱԳՐԻ ՀԱՄԱՐ

*For Staff Use Only*

DISTRICT ID NUMBER

SCHOOL YEAR

ԴՊՐՈՑԻ ԱՆՎԱՆՈՒՄ՝ ____________________

| Ծրագիր, որի համար դիմում եք. *(Նշել միայն մեկը)* | | | |
|---|---|---|---|
| ԴՊՐՈՑԻՑ ԱՌԱՋ | ԴՊՐՈՑԻՑ ՀԵՏՈ | | ՈՒՐԻՇ ԾՐԱԳՐԵՐ |
| Ready-Set-Go! *(RSG)* | երիտասարդական Ծառայություններ | Գրանտի կողմից ֆինանսավորվող ծրագիր *(ASES/21st CCLC/ASSETs)*<br>Ծրագրի անվանում____________ | Ծրագրի անվանում<br>____________ |
| 5 | 5 | 5 | 5 |

## ԴԻՄՈՂ(ՆԵՐ)

Տպատառերով ՊԱՐԶ ԳՐԵՔ ԱՆՈՒՆԸ Անուն *M.I.* Ազգանուն | Դիմողի էլ. փոստի հասցե | Ծննդյան ամսաթիվ | Դասարան

Փողոց | Բն. # | Քաղաք | Ինդեքս

## ԾՆՈՂ(ՆԵՐ)/ԽՆԱՄԱԿԱԼ(ՆԵՐ)

| Մոր/Խնամակալի անուն | Հոր/Խնամակալի անուն |
|---|---|
| Տպատառերով գրեք անունը՝ Անուն *M.I.* Ազգանուն | Տպատառերով գրեք անունը՝ Անուն *M.I.* Ազգանուն |
| Մոր/Խնամակալի էլ. փոստի հասցե | Հոր/Խնամակալի էլ. փոստի հասցե |
| Հեռախոսահամար *(հիմնական)* / Հեռախոսահամար (ուրիշ) | Հեռախոսահամար *(հիմնական)* / Հեռախոսահամար (ուրիշ) |

## ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԵՎ ԱԶԱՏ ԱՐՁԱԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՏՎՅԱԼՆԵՐ *(տրամադրել առնվազն երկու կոնտակտային տվյալ)*

| | | | |
|---|---|---|---|
| #1: ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ | ԱՆՈՒՆ, ԱԶԳԱՆՈՒՆ | Հեռախոսահամար(ներ) | Հասցե (ՓՈՂՈՑ, ՔԱՂԱՔ, ԻՆԴԵՔՍ) |
| #2: ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ | ԱՆՈՒՆ, ԱԶԳԱՆՈՒՆ | Հեռախոսահամար(ներ) | Հասցե (ՓՈՂՈՑ, ՔԱՂԱՔ, ԻՆԴԵՔՍ) |
| #3: ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ | ԱՆՈՒՆ, ԱԶԳԱՆՈՒՆ | Հեռախոսահամար(ներ) | Հասցե (ՓՈՂՈՑ, ՔԱՂԱՔ, ԻՆԴԵՔՍ) |

Ես/Մենք լիազորում եմ/լիազորում ենք «Beyond the Bell – Երեխաների համար ծառայություններ դասաերից հետո» ծրագիրը (BASP) կապնվել վերը նշված Արտակարգ իրավիճակների և ազատ արձակման համար նախատեսված տվյալների մեջ ընդգրկված անձանց որևէ մեկի հետ, և անհրաժեշտության դեպքում, հանձնել իրեն իմ երեխային: Վերը նշված անձինք պետք է լինեն 18 տարեկան և բարձր:

Ես/Մենք թույլտվություն եմ/ենք տալիս իմ երեխային նկարահանելու կամ լուսանկարելու համար: Ես հասկանում եմ, որ բոլոր ֆիլմերը կամ լուսանկարները BASP-ի միակ սեփականությունն են և կարող են օգտագործվել հանրությանը ցուցադրելու, ծրագիրը հրապարակելու կամ նյութեր տպագրելու (BASP-ի կողմից և/կամ BASP-ի համար) նպատակով:

Ես/Մենք սույնով համաձայնություն եմ/ենք տալիս բացահայտելու իմ երեխայի կրթական գրանցումներից քաղաց անձնական տվյալները՝ Ընտանիքի կրթական իրավունքների և Գաղտնիության մասին օրենքի համաձայն, և թույլ եմ/ենք տալիս, որ Լոս Անջելեսի միացյալ դպրոցական շրջանը բացահայտի նման տեղեկատվություն միայն այն չափով և այն ժամանակի ընթացքում, որը անհրաժեշտ է իմ երեխային BASP ծրագրերում մասնակցելու համար:

Արդյոք ձեր երեխան ունի՞ որևէ ֆիզիկական, հոգեկան խնդիրներ և/կամ ուսման հետ կապված դժվարություններ: Եթե այո, խնդրում ենք նշել:

____________________

Արդյոք ձեր երեխան ունի որևէ սննդային ալերգիա: Եթե այո, խնդրում ենք նշել: ____________________

## ՀԱՍՏԱՏՈՒՄ

Մոր/Խնամակալի անուն (տպատառերով) | Մոր/Խնամակալի ստորագրություն | Ամսաթիվ

Հոր/Խնամակալի անուն (տպատառերով) | Հոր/Խնամակալի ստորագրություն | Ամսաթիվ

Տեղի ղեկավարի անուն (տպատառերով) | Տեղի ղեկավարի ստորագրություն | Ամսաթիվ